ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Պեատիգորսկ քաղաքի Աբրահամ քահանայ Շխինեանի անունով, որով, համաձայն Աստրախանի թեմական Առաջնորդի և Պեատիգորսկի ծխական Հոգաբարձութեան միջնորդութեան, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 15 ապրիլի, թ. 842:

Կոնդակ Կոկանդ քաղաքի Ներսէս քահանայ Աբրահամեանի անունով, որով, համաձայն Աստրախանի Հայոց թեմական Առաջնորդի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 15 ապրիլի, թ. 843:

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Ն. Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի Տ. Առաջնորդի 1915 թ. դեկտ. 5-ի, № 433, յայտարարութիւնը, որոշց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան թոյլ տալ Բեսսարաբիայի թեմի Առաջնորդին նշանակել Կոնսիստորիայի անդամ Տ. Բարսեղ ա. քահանայ Խաչանճեանին, տալով Կոնսիստորիայի անդամին յատկացեալ նպաստը: 4 մայիսի, թ. 245:

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ ապրիլի 30-ի, թ. 974, մակագրութիւնը, որոշց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել Վրաստանի Կոնսիստորիային տալ Գանձակի Հոգևոր Կառավարութեան պաշտօնեաներին, առաջիկայ յունիսի մէկից յաւելեալ ռոճիկ, համաձայն ներկայացրած ցուցակի, փոխանորդին՝ 1500 ռ., գանձապահ անդամին՝ 156 ռ., քարտուղարին՝ 780 ռ., գրագրին՝ 390 ռ., գրագրի ժամ. օգնականին՝ 120 ռ. և ծառային 168 ռուբլի: 9 մայիսի, թ. 249: